ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՇԻՆԱԿԱՆ» ԴԱՍԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պրոֆ. Ա. Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Պրոֆ. Ս. Ե. Հակոբյանի «Հայ գյուղացիության հողին ամրացման և ճորտացման հարցի շուրջը» ուշագրավ հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», 1963 թ., № 1) հեղինակը քննության է առնում հին և միջնադարյան Հայաստանի «շինական» դասի վերաբերյալ գոյություն ունեցող կարծիքները։ Հոդվածի ծավալի սահմանափակությունը հեղինակին, հարկավ, չէր կարող հնարավորություն ընձեռել՝ հանգամանորեն քննության առնելու «պատմական հարուստ անցյալ ունեցող» այդ պրոբլեմի վերաբերյալ գոյություն ունեցող ամբողջ գրականությունը։ Սակայն պրոֆ. Ս. Ե. Հակոբյանի հոդվածի արժանիքը մենք համարում ենք այն, որ նա, առաջ քաշելով այդ հարցը, հստակորեն պարզաբանում է իր տեսակետը, որը հիմնական գծերով հակադրվում է գոյություն ունեցող և տարածված կարծիքին։

Մենք, հիմնականում համակարծիք լինելով պրոֆ. Հակոբյանի հետ, անհրաժեշտ ենք համարում քննության առնել միայն ակադեմիկոս Հ. Մանանդյանի մեկնարանությունները տվյալ հարցի՝ Հին Հայաստանի շինական դասի սոցիալական դրության վերաբերյալ։

Ակադ. Հ. Մանանդյանը միանգամայն իրավացիորեն «շինականների սոցիալական դրության պրոբլեմը» մեր պատմության համար «շատ կարևոր խնդիր» է համարում։ «Շինական դասի սոցիալական-տնտեսական վիճակը Հին Հայաստանում,— գրում է նա,— հայոց ներքին կյանքի ամենադժվար ուսումնասիրելի խնդիրներից մեկն է»[1], և Մանանդյանը բազմիցս անդրադարձել է այդ դժվարին խնդրի լուսաբանմանը. «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում» (ՀՍԽՀ Պետական համալսարանի տեղեկագիր, 1925, № 1), «Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում» (Տեղեկ. դիտ. և արվեստ. ինստ., 1926, № 1 «Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении», 1932, «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», 1934, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Բ, մաս Ա. 1952)։

Գլուխ խոնարհելով մեր անվանի գիտնականի հմտության և քրտնաջան աշխատանքի առաջ, այնուամենայնիվ մենք հավակնում ենք մեր համեստ ուժերի սահմաններում քննության առնել, թե ակադ. Հ. Մանանդյանին հաջողվե՞լ է արդյոք լիովին պարզաբանել այդ դժվարին խնդիրը։

«Մատենագրական աղբյուրները, — գրում է ակադ. Հ. Մանանդյանը, — դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս քննության առնելու և լուսաբա-

---

1 Տե՛ս Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 141։

նելու այդ (շինականների սոցիալական դրության վերաբերյալ—Ս. Մ.) խնդիրը հանգամանորեն, իր բոլոր մանրամասնություններով... Աղբյուրների մեջ կան միայն կողմնակի մի քանի ցուցումներ, որոնցից, իմ կարծիքով, կարելի է հետևցնել, որ նախարարական Հայաստանում ևս շինականները գտնվել են, ընդհանուր առմամբ, ճորտանման վիճակում»[3]։

Ինչպես հայտնի է, մարքսիզմի կլասիկները ֆեոդալական արտադրահարաբերությունների պայմաններում իրարից տարբերում են երեք կարգի դյուղացիություն՝ ճորտ, կախյալ և ազատ»։

Արդ, նախարարական Հայաստանի շինականներն իրենց սոցիալական դրությամբ, Մանանդյանի կարծիքով, ֆեոդալական դյուղացիության ո՞ր կարգին էին պատկանում։ Մեզ թվում է, որ ակադ. Մանանդյանը հենց այդ հիմնական հարցում լավ չի կողմնորոշվում։ Նրա պատկերացրած հին Հայաստանի շինականը մի կողմից ճորտ է բառիս իսկական իմաստով, քանի որ «շինականները համարվել են կալվածատեր ազնվականության հատուկ դույքը» և «կարելի է հավանական համարել, որ շինականները պետք է լինեին ճորտացած և կապված հողին»[4]։ Այսպիսով, ըստ ակադ. Մանանդյանի, նախարարական Հայաստանի շինականները ճորտեր էին արդի դիտական իմբռնումով։ Մյուս կողմից, մեր պատմաբանը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ «Շահապիվանի ժողովի կանոններից երևում է, որ շինականներն ունեցել են իրենց հատուկ դույքը, որ նրանք իրավունք են ունեցել տալ իրենց զավակներին կամ թողնել ժառանգորեն»։ «Դվինի ժողովի կանոններում կա մի հետաքրքիր վկայություն, որից կարելի է եզրակացնել, որ շինականները կարող էին գնել անշարժ գույք», նրանք «ունեցել են քսակագին հողեր»։ Շինականները ենթակա չեն եղել իրենց հողատերերի դատական ու ոստիկանական հսկողությանը, այլ «իրավունք են ունեցել հայց տալու և դատվելու եկեղեցական դատարաններում։ Հավանական է, որ նրանք նույն իրավունքն ունեցել են նաև աշխարհիկ դատարաններում։ Նրանք կարող էին ամուսնանալ առանց կալվածատիրոջ համաձայնության»։ Վերջապես, «շինականների դրությունը տուգանքների տեսակետից մոտավորապես հավասար է եղել անգլիական ազատ գյուղացիության դրությանը և երկու անգամ ավելի նպաստավոր է եղել, քան ռուսական սմերդներինը» (այսինքն՝ նույնպես ազատ գյուղացիներինը—Ս. Մ.)։ Ավելին, Մանանդյանը այն կարծիքին է, թե «Հին Հայաստանում գոյություն են ունեցել համայնական հողատիրության որոշ կարգեր և հավասար հողաբաժանումն ըստ մարդաթվի», որ «շինականներն ուշադրության են առնվել երբեմն ֆեոդալական Հայաստանի քաղաքական կենցաղում»։

Ակադ. Հ. Մանանդյանը փաստական նյութի հետազոտության ընթացքում գալով այն եզրակացության, որ հին Հայաստանի շինականները մի կողմից համարվում էին կալվածատեր ազնվականության դույքը և ամրացված էին հողին, իսկ մյուս կողմից անձնապես ազատ էին, եզրակացնում է, որ հին Հայաստանի շինականները ոչ թե «ստրկանման ճորտեր» էին, այլ բյուզանդական կոլոնների նման «կախյալ ճորտեր», կամ «կիսազատ ճորտեր»։ Այդ տեսակետը նա անց է կացնում իր բոլոր աշխատություններում և ամենից

---

2 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, 1952, էջ 360։

3 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XV, էջ 641։

4 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. Բ, մաս Ա, էջ 357։

հակիրճ ձևակերպում է այսպես՝ «Իրենց հասարակական դրությամբ բոլորից ցածր կանգնած էին «շինականս»-ներ կոչվող հողին ամրացված կախյալ գյուղացիները, որոնք... անձնապես ազատ էին և շատ կողմերով հիշեցնում էին բյուզանդական կոլոններին»[5]։

Ճիշտն ասած, չնայած ակադ. Մանանդյանը վկայակոչում է բյուզանդական կոլոններին, ռուսական зависимые և գերմանական Hörige գյուղացիներին, մենք դժվարանում ենք ֆեոդալիզմի արտադրահարաբերությունների պայմաններում պատկերացնել գյուղացիների մի կատեգորիա, որը միաժամանակ և՛ կալվածատիրոջ գույքն էր, և՛ անձնապես ազատ շինական էր։ Մեր կարծիքով, այդ երկու դրույթներն անհարիր են, մեկի առկայությունը բացառում է մյուսի ներկայությունը։

Բայց մյուս կողմից ակադ. Մանանդյանն այնպիսի խոշոր գիտնական է, որ նա չի կարող այդպիսի ծանրակշիռ խոսք ասել առանց իր տեսակետը սկզբնաղբյուրներից վերցրած փաստերով հիմնավորելու։ Ուստի մենք անհրաժեշտ ենք համարում մեկ առ մեկ քննության առնել նրա կողմից բերվող փաստերը, տեսնելու համար թե արդյո՞ք բերված փաստերից անառարկելիորեն բխում է նրա այդ տեսակետը։

2

Ակադ. Մանանդյանը հենվում է Դվինի ժողովի 9-րդ կանոնի վրա, որտեղ ասված է՝ «Յորժամ ազատք զիւրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեամբ առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել, մոլեալք և մոլորեալք ի քրիստոնէական հաւատոյս...»[6]։

Մեզ զբաղեցնող հարցի կապակցությամբ այս վկայության մեջ երկու կետ կա. 1) ազատներն իրենց գույքը բաժանելիս բաժանում էին երդերն ու մարդկանց. 2) նրանք աշխատում էին հոգևորականներին ծառա և ստրուկ դարձնել։

Միանգամայն իրավացի է պատմաբանը, երբ ասում է, թե «Դվրնի այդ կանոնից պարզ երևում է, որ երգերն ու մարդիկ եղել են ժառանգական բաժանման առարկա». ճշմարիտ է նաև այն, որ «հավանական է ենթադրել, որ նույն այդ գույքը (այսինքն՝ այն, ինչ որ բաժանման առարկա էր ծառայում — Ս. Ս.) կարելի է եղել նաև գնել, վաճառել, ընծայել, կտակել և այլն»։ Բայց դրանից բոլորովին չի բխում, թե մարդկանց ու երդերի բաժանումը և գույքի օտարման իրավունքը վերաբերում է շինականների անձնավորությանը։ Միայն այդ դեպքում ակադ. Մանանդյանն իրավունք կունենար եզրակացնելու, որ շինականները համարվում էին ազնվականների գույքը և ճորտացած ու կապված էին հողին։

Մեզ միանգամայն բանական է թվում Մանանդյանի այն կարծիքը, որ հայ ֆեոդալներն այդ ժամանակ սեփական խոշոր տնտեսություն չէին վարում և նրանց եկամուտի գլխավոր աղբյուրը շինականներից գանձվող հարկերն ու տուրքերն էին։ Մյուս կողմից, ինչպես ակադ. Մանանդյանի, այնպես էլ Ն. Ադոնցի կարծիքով, ֆեոդալների սեփականությունը կազմող հողերը

[5] Проф. Я. А. Манандян, Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении, 1932, էջ 8։

[6] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 161—162։

ժառանգարար գտնվում էին գյուղական համայնքների տրամադրության տակ, և հողի բաժանումը շինականների միջև տեղի էր ունենում անկախ ֆեոդալից՝ համայնական կանոնների համաձայն «ըստ մարդաթվի և հավասար»։ Այդ երկու գիտնականների տարաձայնությունը գյուղացիական հողաբաժիններն արտահայտող տերմինի մասին է։ Մանանդյանի կարծիքով, այդ հողաբաժիններն արտահայտվում էին «վիճակ» տերմինով, իսկ Ադոնցի կարծիքով՝ «կալված»։ Այս հեղինակների մեկնաբանությունից պետք է եզրակացնել, որ հողի օգտագործման իրավունքը պատկանում էր համայնքին, իսկ ֆեոդալներն այդ հողերի վրա ունեցած տիրակալման իրավունքի (права владения) հիման վրա գանձում էին հողի ռենտան։ Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ համատիրակալների միջև երդերի և մարդկանց բաժանումը, հավանաբար, կարող էր նշանակել գանձվող ռենտայի բաժանում։ Հակառակ պարագայում կստացվի, որ համայնական գյուղն իր շինականներով և հանդերով բաժանվում էր տարբեր տիրակալների միջև։ Այս դեպքում ոչ միայն մի համայնքը վեր է ածվում մի քանի համայնքների, այլև անհավանական է դառնում հողերի «ըստ մարդաթվի և հավասար բաժանումը»։ Բացի այդ Դվինի ժողովի այդ նույն հոդվածի շարունակության մեջ ասված է. «Արդ՝ եթէ ոք ազահութեան ակամբ հայեսցի և զազատ մանկուս եկեղեցւոյ ի բաժին և ի վիճակ ծառայութեան արկցեն, այնպիսիքն ի սուրբ Լուսաւորչի օրհնութենէն և ի մերմէ ժողովոյս հեռի եղիցին և մի եղիցի իշխանութիւն վարդապետի և քահանայից զայնպիսեաց պատարագն օրհնելոյ»։ Եթե հոդվածի առաջին մասում սոսկ փաստի արձանագրումն է, ապա այս երկրորդ մասում՝ որոշումն է։ Եվ ըստ էության նույն միտքն է արտահայտված, ինչ որ առաջին մասում, այսինքն՝ նույն իմաստը կրկնված է այլ բառերով։ Ամենայն վստահությամբ կարելի է հավասարության նշան դնել հետևյալ դարձվածքների միջև.

> յոլովք չարակնութեամբ առնեն—եթե ոք ազահութեան ակամբ հայեսցի-
> զժառանգաւորս եկեղեցւոյ—զազատ մանկունս եկեղեցւոյ.
> ի ծառայութիւն արկանել ի վիճակ ծառայութեան արկցեն։

Հոդվածի առաջին մասից բացատրության կարոտ է մնում «ի ստրկություն արկանել» հասկացողությունը, որին կանդրադառնանք ստորև։ Իսկ առ այժմ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ «զազատ մանկունս եկեղեցւոյ» հակադրություն է «վիճակ ծառայության» հասկացողության։ Մենք ենթադրում ենք, որ «վիճակ ծառայության» և «ի հարկի ծառայություն» նույն հասկացողություններն են։ Իսկ հենց իրեն՝ ակադ. Մանանդյանի ասելով «ի հարկի ծառայութեան... սոցիալական-տնտեսական հիմքը կազմել է հարկատվությունը, որից ազատ են եղել ազնվական արտոնյալ դասերը»[8]։

«Թադ. Ավդալբեգյանը,— գրում է Մանանդյանը,— իր «Հաս, սակ ու բաժ» աշխատության մեջ մատնացույց է անում, որ «զերդ և զմարդ» բաժանելը սովորական երևույթ է նաև այժմյան Պարսկաստանում, սակայն գյուղացիք այնտեղ հարկատու են, բայց ճորտ չեն։ Այս առարկությունն, իմ կարծիքով, համոզիչ չէ, որովհետև վերոհիշյալ կանոնում ակնարկվում է նաև շինականների «ստրկության» դրությունը»[9]։

---

7 Նույն տեղում, էջ 142—143։
8 Նույն տեղում, էջ 155։
9 Նույն տեղում, էջ 162։

Եթե տվյալ կոնտեքստում «ծառայություն» և «ստրկություն» տերմիններին հաղորդենք նույն բովանդակությունը և այդ բառերը հոմանիշ համարենք, որ այլ պարագայում բոլորովին անհավանական չէ, ապա ակադ. Մանանդյանի եզրակացությունը թվում է տրամաբանական։ Բայց նախ՝ համոզեցուցիչ չէ, որ այդ տերմիններով նկատի են առնված հատկապես շինականները, քանի որ այդտեղ շինականների մասին որևէ ակնարկ չկա, խոսքը հոգևորականներին «ծառա» և «ստրուկ» դարձնելու ապօրինի ձգտման մասին է։ Եթե հարցին ձևականորեն մոտենալու լինենք, ապա նույնքան իրավամբ կարող ենք եզրակացնել, որ «ազատները» ձգտում էին եկեղեցական դասի ներկայացուցիչներին ոչ թե ճորտ, այլ ստրուկ դարձնել արդի դիտական իմաստով։

Ղազար Փարպեցին վկայում է, թե «պարեզոտաւորք ազատեալ են ի Քրիստոս», ինքը Մանանդյանը պատմական տվյալների հիման վրա գտնում է, որ «հոգևորական դասի մեջ ժառանգական է եղել քահանայական պաշտոնը» ուրեմն՝ առկա է եղել որոշ կաստայականություն։ «Հոգևորականությունը դասված է եղել ազնվականների շարքում և իր ապահարկությամբ հավասարված է համարվել «ազատ»-ների դասին»[11]։ Հետևաբար, եթե ազատները ձգտում էին հոգևորականներին «ի ծառայություն արկանել», այդ այլ բան չէր նշանակի, քան վերացնել նրանց ապահարկության արտոնությունը և ոչ թե ամրացնել հողին՝ ճորտացնել։ Ինչ վերաբերում է «ի ստրկություն արկանել» արտահայտությանը, ապա մեր կարծիքով, այդտեղ առկա է ոչ թե ուղղակի իմաստ, այլ փոխաբերական, այն է՝ «ազատ»-ները ջանում էին հոգևորականներին իրենց ենթարկել, մի հանգամանք, որ նրանք համազոր էին համարում ստրկացման, այլ կերպ ասած՝ «ի ստրկություն արկանել» արտահայտությունը սոսկ պատկերավոր արտահայտություն է և ոչ թե բառացի ստրկացում։

Վերևում մենք աշխատեցինք ցույց տալ, որ երդերի և մարդկանց բաժանման մասին նրա մեկնաբանությունը հազիվ թե հնարավոր լինի ընդունելի համարել։ Իսկ այս վերջին վկայությունն առանձին վերցրած՝ շինականների իրավական դրության մասին ոչինչ չի ասում։

3

Շինականների հողին ամրացած լինելու վերաբերյալ իր տեսակետը հիմնավորելու համար ակադ. Մանանդյանը վկայակոչում է Աբրահամ Խոստովանողի և Խորեն երեցի մասին Փարպեցու տված տեղեկությունները և գտնում է, որ շինականներն «ըստ երևույթին, ժառանգաբար կապված են եղել իրենց զբաղմունքին, հողին և հարկատու դրությանը»։ Եվ իսկապես, նրա այդ եզրակացությունը տրամաբանորեն բխում է այն մեկնաբանությունից, որ նա տալիս է Փարպեցու համապատասխան հատվածներում արտահայտված «ի հարկի» և «մշակութիւն» տերմիններին։ Սակայն մեղ թվում է, այդ կոնտեքստում հիշյալ տերմինների բովանդակությունը բոլորովին այլ բան է։ Այդ վկայություններից մեկը հետևյալն է. «Կտրեալ ղերկոցուց զականջսն՝ ետուն տանել յԱսորեստան, ի գաւառն որ անուանեալ կոչի Շափուլ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի»[12]։ Այսպիսով, Հազկերտ II-ը

10 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, էջ 362։

11 Նույն տեղում, էջ 346։

12 Նույն տեղում, էջ 158։

հրամայում է, որ Աբրահամ Խոստովանողը և Խորեն երեցը հրաժարվեն քրիստոնեությունից և կրակապաշտություն ընդունեն։ Երբ նրանք հրաժարվում են կատարել այդ հրամանը, թաղավորը կտրել է տալիս նրանց ականջները և աքսորում է Շափուլ գավառը «կալ ի հարկի և առնել մշակութիւն արքունի»։ Հետագայում Աբրահամ Խոստովանողը տեղական քրիստոնյաների օգնությամբ փրկագնվում է։ Ակադ. Մանանդյանը, բերելով երեք միանման հատվածներ, եզրակացնում է՝ «Փարպեցու վկայության բովանդակությունից երևում է, որ «արքունի մշակը» անվան տակ կարելի է հասկանալ արքունի գյուղացիներին, որոնց գլխավոր պարտականությունը եղել է «ի հարկի ծառայությունը»։ Միայն թվում է, որ ակադ. Մանանդյանի այս կռահումը միանգամայն անհամոզեցուցիչ է։ Շատ տարօրինակ է, որ պետականորեն պատժված մարդիկ հավասարեցվում են արքունի գյուղացիներին և նրանց պատժից բխող սահմանափակումները տարածվում են շինական դասի վրա։ Որովհետև Աբրահամ Խոստովանողը փրկագնվել է, «կարելի է, ուրեմն, ենթադրել,—գրում է Մանանդյանը,—որ արքունի գյուղացիներին թույլատրված է եղել հարկային պարտականությունների ապագնումը», հետևաբար, «շինականները... իրավունք չեն ունեցել ինքնակամ կերպով թողնել այդ ծառայությունը և, ըստ երևույթին, ժառանգաբար կապված են եղել իրենց զբաղմունքներին, հողին և հարկատու դրությանը»[13]։ Եթե ակադ. Մանանդյանի այս դիտողությունները տրամաբանորեն զարգացնենք, ապա չի կարելի չհանգել այն եզրակացության, որ եթե երբ արքունի գյուղացիներին թույլատրված է եղել փրկագնվել («ապագնվել»), այդ ինքնին նշանակում է, որ Հայաստանում եղել է շինականներից տարբեր գյուղացիական մի դաս, որը ժառանգաբար կապված չի եղել իր զբաղմունքին, հողին և հարկատու դրությանը։ Հարց է առաջանում, ինչպե՞ս է կոչվել գյուղացիության այդ հատվածը, որի մեջ, բնականաբար, պետք է ընդգրկվեին փրկագնված շինականները։ Որքան հայտնի է, մեր պատմական գրականության մեջ այդպիսի անուն չի հայտարերված, բացի Փավստոսի մի անգամ հիշատակված «կարճազատները», որի էությունը մինչև այժմ մնում է առեղծվածային։

Ակադ. Մանանդյանի այդ եզրակացության համար հիմնական կռվան է ծառայում «ի հարկի» արտահայտությունը, որը նա մեկնաբանում է «ի հարկի ծառայություն» կամ պարզապես՝ հարկատվություն։ Բայց բանն այն է, որ հայերեն հարկ բառն ունի ռուսերեն ինչպես налог, подать, այնպես էլ принуждение բառի իմաստը։ Օրինակ, հարկադրական աշխատանք նշանակում է ոչ թե հարկ տալու աշխատանք, այլ բռնադատված աշխատանք։ Այդ պատճառով էլ ինչպես Բացատրական, այնպես էլ Առձեռն բառարաններում հարկ բացատրված է որպես տուրք, պարտադիր ծառայություն, բռնադատություն։ Ուստի, եթե նկատի ունենանք Փարպեցու վկայության բովանդակությունը (այն, որ խոսքը վերաբերում է պետականորեն պատժված և աքսորված մարդկանց), ապա այդ կոնտեքստում «պատուհաս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշակսն, և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց» հատվածը այլ բան չի կարող նշանակել, քան հարկադրական աշխատանք կատարել «աքսորված հատուկ մի խմբի հետ» և ոչ թե արքունի շինականների հետ աշխատել և հարկ վճարել։

13 Նույն տեղում, էջ 159։

Այս ամենից, հավանաբար, պետք է եզրակացնել, որ Փարպեցու՝ «Իսկ երանելի երէցն Աբրահամ երաշխաւորութեամբ հաւատացելոց աշխարհին, որք զտունս իւրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա դրեցին յարքունիս զվախճան նորա, և կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորա»[14] վկայությունը պետք է հասկանալ ոչ թե ցմահ հարկատվությունից ազատագրում, ինչպես կարծում է Մանանդյանը, այլ ցմահ պատժից՝ հարկադրական-տաժանակիր աշխատանքից։ Մեր եզրակացության համար կովան կարող է ծառայել այդ հարցի վերաբերյալ Եղիշեի պատմածը։ 1) Եղիշեն գրում է՝ «Եհան ի նմին քաղաքէ ասորեստանեայս քրիստոնեայս արս հինգ... Կտրեաց զնոսա ունչս և զականջս, և ետ տանել յԱսորեստան, զի կայցեն ի մշակութեան արքունի»[15]։ Բնական է, որ նրանց ուղարկում էին ոչ թե իրենց ծննդավայրը, այլ Ասորիքում գոյություն ունեցող պատժի վայրը, որտեղ նրանք մշակություն պետք է աներ. անհավանական է, որ այդ միջավայրը լիներ «արքունի գյուղացիների» միջավայր, ինչպես կարծում է Մանանդյանը։ 2) Խորենի և Աբրահամի մասին Եղիշեն գրում է, որ նրանց ականջները կտրելուց հետո հրահանգվեց՝ «երթալ ձեզ յԱսորեստան, և լինել ձեզ մշակ յարքունիս...»։ Ինչպես տեսնում ենք, այստեղ ասված է նույնը, ինչ որ ասում է Փարպեցին, բայց բացակայում է վերջինիս «և ի հարկի կայցեն մինչև ցմահ իւրեանց»։ Իսկ Եղիշեն մի քանի տող ներքև գրում է, որ նրանք «էին յարքունի պատուհասի»[16], սրանից մենք եզրակացնում ենք, որ այդ էլ հենց նշանակում էր «ի հարկի կայցեն», այսինքն՝ խոսքը հարկադրական աշխատանքի մասին է։ 3) Ինչպես երևում է Եղիշեի պատմածից, նրանց նկատմամբ սկզբնական որոշումը որոշ չափով մեղմացվեց, քանի որ աքսորելու ժամանակ զինվորներին հրահանգվեց՝ «միայն աստի դուք առէք գնացէք, և հասեալ յԱսորեստան՝ ուր կամ իւրեանց է և շրջեսցին»[17], այլ կերպ ասած, եթե այսօրվա ձևով արտահայտվելու լիներք, նրանք ազատ աքսորի ենթարկվեցին և Ասորիքում «յայտ և գաղտ մեծապէս ընկալեալ եղեն ի բնակչաց աշխարհին»[18]։ Նրանք ազատ շրջում էին երկրում և հավատացյալներից տարեցտարի դրամ էին ժողովում և օգնում էին իրենց հայրենակից կալանավորներին։ Բնականաբար, նրանք ոչ միայն շինականների շարքում չէին, այլև «մշակություն» չէին անում։ Հետևաբար, եթե տեղական հավատակիցների օժանդակությամբ Աբրահամը փրկագնվեց, ապա ոչ թե շինականությունից փրկագնվեց, այլ այսօրվա լեզվով արտահայտված, նրա դատվածությունը վերացավ և նա հնարավորություն ստացավ հայրենիք վերադառնալու։ Հետևաբար, Փարպեցու այդ վկայությունները որևէ առնչություն չունեն շինական դասի սոցիալական դրության հետ և չեն կարող հիմք ծառայել հին Հայաստանի շինականներին ճորտեր համարելու համար։

4

Ակադ. Մանանդյանի համար շինականների ճորտ լինելու վերաբերյալ ապացույց է ծառայում նաև Ղազար Փարպեցու «Թղթում» արտահայտություն գտած ինքնակենսագրական տեղեկություններից մեկը, որին մեր մի շարք ան-

14 Նույն տեղում, էջ 158։
15 «Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 183։
16 Նույն տեղում, էջ 187։
17 Նույն տեղում։
18 Նույն տեղում։

վանի գիտնականներ միանգամայն հակառակ մեկնաբանություն են տվել։ Մինչդեռ այդ տեղեկության հիման վրա ակադ. Մանանդյանը Փարպեցուն համարում է ճորտական ծագում ունեցող, Զարբհանալյանը, պրոֆ. Գր. Խալաթյանցը և ակադ. Մ. Արեղյանը ծագումով նրան համարում են ազնվական՝ կապված Մամիկոնյանների կամ Արծրունիների հետ։

Վկայակոչելով Փարպեցու համապատասխան հատվածը, Մանանդյանը գրում է. «Որպեսզի Փարպեցին կարողանար հոգևորական դառնալ և ստանալ «ազատություն», որ հատուկ էր եկեղեցականներին, հարկավոր է եղել նրան «ծառայությունից» «զատուցանել»։ Եթե շինականները լիներին ազատ՝ դրժվար թե հարկավոր լիներ նրանց ազատագրումը նախկին «ծառայությունից»[19]։

Պատմաբանի այս դատողությունները միանգամայն տրամաբանական են թվում, եթե նրա կողմից վկայակոչվող տեքստն անառարկելիորեն ճիշտ է մեկնաբանված։ Սակայն նախքան նրա կողմից նշված տեքստի վերլուծության անցնելը, անհրաժեշտ ենք համարում հիշատակել Փարպեցու կենսագրության հետևյալ հանրահայտ փաստերը։ Վահան Մամիկոնյանին ուղղած իր «Թղթի» մեջ Փարպեցին գրում է. «Երանելի մայրն քո յորժամ առ Բդեշխն ած զձեզ, յորում դրան և զմեզ ուսուցանէին, սակայն թէպէտ և ըստ տիոց աւագագոյնք քան զձեզ էաք, այլ սննդակիցք էաք զձեզ և խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր. սնուցանէ մայրն ձեր օրհնեալ և Անուշ-Վռամ (Բդեշխի կինը և Վահան Մամիկոնյանի մորաքույրը.—Ս. Մ.) ըստ իւրեանց հոգեսիրութեանն և զմեզ ընդ ձեզ՝ որպէս և զձեզ»[20]։

Այսպիսով, Փարպեցին ոչ միայն Վահան Մամիկոնյանի սննդակիցն ու խաղընկերն է եղել, այլև պատանի հասակում նրան դաստիարակել են ազնվատոհմ տիկիններն այնպես, ինչպես Վահան Մամիկոնյանին և նրա եղբայրներին։ Այնուհետև նա ասում է՝ «Սնեալ և ուսեալ առ ոտս առաքինակրօն երանելւոյն Աղանայ, որ էր ազգաւ ի հոյակապ և յսկանաւոր տոհմէն Արծրունեաց...»[21]։ Փարպեցու այս ինքնակենսագրական ակնարկներից պարզությամբ երևում է, որ այդ բարձր ազնվականությունը հոգատար վերաբերմունք է ունեցել դեպի Փարպեցին և նրա դաստիարակության ու կրթության գործում խրտրություն չի դրվել նրանց երեխաների և Փարպեցու միջև։ Եթե նկատի ունենանք այս տվյալները և Մանանդյանի այն վստահացումը, թե «արհամարհական վերաբերմունքը, որ ուներ գյուղացիական դասի հանդեպ ազնվականությունը միջնադարյան Եվրոպայում, նկատելի էր նաև հայկական աղբյուրներում»[22] և եթե ճիշտ է Մանանդյանի այս վերջին հավաստիացումը, ապա մեծապես կասկածելի է դառնում Փարպեցու ճորտ լինելու հանգամանքը։

Այժմ քննության առնենք հիմնական՝ թե ակադ. Մանանդյանի վկայակոչած տեքստը որքան է համապատասխանում նրա մեկնաբանությանը։

«Արդ՝ զառաջին կելոյն իմոյ զվարս Ներսեհ և Հրահատ Կամսարական գիտեն. զՍիւնեայն՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհի։ Եւ դու յայց ելեալ խնդրել դիս, և զտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրև զաղքատ զոք ի կազմածէն և ի մանկաւոյն, և ոչ իբրև օտար զոք ի բեն և կամ զծառայ ուրուք.

19 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 165։
20 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ», 1907, էջ 411։
21 Նույն տեղում, էջ 19։
22 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 175։

քանզի պարեգօտաւորք ազատեալ էն ի Քրիստոս։ Իսկ որ զատոյցն զիս պարեգօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիթ, տէր Աղան՝ քո տեառն քեռի էր»[22]։

Այս հատվածի առաջին նախադասության մեջ արտահայտված «ոչ իբրև օտար զոք ի քէն» դարձվածքի մեկնաբանությունը Զարբհանալյանի և Խալաթյանցի կողմից, որոնք այդ հիման վրա Փարպեցուն համարել են «ընտիր և ազնվական ցեղից» կամ «ազատ կամ յազգէ ազնուաց», Մանանդյանի կարծիքով սխալ է, որովհետև դրանով Փարպեցին ակնարկում է ոչ թե իր ազգակցությունը Մամիկոնյան տոհմի հետ, այլ «որ ինքն օտար չէ Վահանին, իբրև սննդակիցը մանկության հասակում»։ Փարպեցու այդ դարձվածքը, կտրված նրա կենսագրության մյուս հանգամանքներից, այնքան կարճառոտ է, որ հավանական կարելի է համարել թե՛ մեկ, թե՛ մյուս կռահումը։ Ուշագրավ է, որ Մանանդյանի կողմից «Փարպեցու վկայության այս նոր մեկնաբանությունից» գրեթե երկու տասնամյակ անց մեր անվանի հայկաբան Մանուկ Աբեղյանը, անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Հավանորեն նա որևէ ազգակցության կամ մերձավոր կապ է ունեցել Մամիկոնյան կամ Արծրունի տոհմի հետ...»[23]։ Այսպիսով, այն ժամանակ, երբ հայտնի էր Մանանդյանի նոր մեկնաբանությունը, Մ. Աբեղյանը ևս շատ հեռու էր Փարպեցուն ծագումով ճորտ համարելու ենթադրությունից, որովհետև հիմնվում էր ոչ թե այդ կարճառոտ դարձվածքի, այլ նրա կենսագրության վերաբերյալ տվյալների ամբողջության վրա։

«Որ այդ խոսքերը չեն կարող հիմք ծառայել Փարպեցու ազնվական ծագման,—գրում է Մանանդյանը,—այդ ավելի քան պարզ երևում է նույն հատվածի վերջին պարբերությունից, որի մեջ Փարպեցին իր ծագման մասին վկայում է, որ իրեն հոգևորական դարձնելով, ծառայությունից զատուցել և ազատության առիթ է եղել տեր Աղանը, Վահան Մամիկոնյանի քեռին»[25]։ Այս առնչությամբ Մանանդյանը միանգամայն իրավացիորեն ընդգծում է, որ «շինականների «անազատ» լինելը, այսինքն, «ազատների» դասին չպատկանելը դեռևս ապացույց չէ նրա ճորտական վիճակի»[26]։ Այնուհետև՝ «եթե շինականների «ծառայությունն» անվանվել է... «ի հարկի ծառայություն»... ազնվականների «ծառայությունը», նմանապես և հոգևորականների «ծառայությունը» համարվել են «ի սպասու ծառայութիւն», իսկ ստրուկներինը՝ «ի ստրկաց կարգի ծառայութիւն...»»[27]։

Հետևաբար, առանց համապատասխան որոշիչների «ծառայություն» և «ազատություն» բառերը տերմինաբանական նշանակություն չեն ստանում և հարցը պարզել չեն կարող։ Ակադ. Մանանդյանը այդ կոնտեքստում «ծառայություն»-ը համարում է հատուկ տերմին, «ի հարկի ծառայությունը» Մանանդյանի մեկնաբանությամբ նշանակում է ճորտություն, իսկ «ազատութիւն»-ը՝ ճորտությունից ազատագրում։ Մինչդեռ նրա վկայակոչած տեքստում այդ իմաստները, մեր կարծիքով, լրիվ բացակայում են։ Տեքստում խոսքը ոչ թե «ծառայութիւն»-ից «զատելու» մասին է, այլ «աշխարհիկ ծառայութիւն»-ից, իսկ դրանք, մեզ թվում է, բոլորովին տարբեր իմաստներ են։ Եթե առաջին

23 Նույն տեղում, էջ 164։

24 Մ ա ն ո ւ կ Ա բ ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, 1944, էջ 311։

25 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 165։

26 Նույն տեղում, էջ 161։

27 Նույն տեղում, էջ 156։

դեպքում հնարավոր է ենթադրել, որ խոսքը վերաբերում է «ի հարկի Հսոա-յության»-ը կամ Մանանդյանի մեկնաբանության համաձայն՝ շինականների ճորտային կացությանը, ապա երկրորդ դեպքում այդ ենթադրությունն խսպառ բացառվում է, քանի որ «ծառայութիւն աշխարհի» հասկացությունը հակադրություն է ոչ թե «ի սպասու ծառայության» հասկացության, այլ հոգևոր ծառայության։ Ուստի, տվյալ կոնտեքստում, «ծառայություն աշխարհի»՝ նույն զբաղմունքական և «գործակալական» ծառայության իմաստն ունի։ Ճիշտ է, հիշված տեքստում հիշատակված է, որ Աղանը պատճառ է դարձել Փարպեցու «ազատության», բայց այդտեղ դա նշանակում է ոչ թե ճորտությունից ազատագրում, այլ նույն իմաստն ունի, ինչ որ նախորդ նախադասության «պարեգոտաւորք ազատեալ են ի Քրիստոս», այսինքն՝ Աղանը, Փարպեցուն հոգևորական ձեռնադրելով, պատճառ է դարձել աշխարհիկ ծառայությունից նրա ազատվելուն և հոգևոր ծառայություն ստանձնելուն, ավելի պարզ ասած՝ Աղանը Փարպեցուն պարեգոտավոր է դարձրել, կրոնական է ձեռնադրել։ Այս ամենում, ինչպես տեսնում ենք, նշույլ անգամ չկա ճորտության մասին։

3

Հին Հայաստանի շինականների «ճորտ» լինելուն իբրև ապացույց Հ. Մանանդյանը վկայակոչում է Մովսես Խորենացու «Ողբ»-ի մի արտահայտությունը։ Նկարագրելով հայ ժողովրդի զանազան խավերի արատավոր բարքերը, Խորենացին գրում է՝ «ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, այրեցողք, (ըստ Մանանդյանի՝ արբեցողք—Ս. Մ.), վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ»։

Մեր նշանավոր բանասերներից Խ. Ստեփանեն և Մ. Էմինը «փախչողք ի ժառանգութենէ» արտահայտությունը թարգմանել են «հոգևոր կոչումից փախչող», «հոգևոր կոչումից խուսափող»։ Այս թարգմանությունները բառացի վերցրած սխալ չեն, բայց ըստ էության հակասում են պատմական իրողություններ։ «Ժողովրդականները» հազիվ թե փախչեին կամ խուսափեին մի արտոնությունից, որը հսկայական առավելությունների աղբյուր էր ծառայում, և V դարում ոչ ոք համեցեք չէր անում «ժողովրդականներին» այդ կոչումը, որը հոգևոր դասի արտոնությունն էր։ Եվ միանգամայն իրավացի է Մանանդյանը, երբ մերժում է այդ թարգմանությունները։ Իսկ Ս. Մալխասյանը «փախչողք ի ժառանգութենէ» արտահայտությունը ծանոթագրում է իբրև անհասկանալի։

Հ. Մանանդյանը, հենվելով Գալուստ Տեր-Մկրտչյանի (Միարանի) բանավոր կարծիքի վրա, գտնում է, որ «փախչողք ի ժառանգութենէ» արտահայտությունը վերաբերում է շինականներին։ Ուստի «ժառանգութիւն» այդ կոնտեքստում նշանակում է «այն հողը և «շինական ծառայության» այն ծանր վիճակը, որից շինականները աշխատել են խուսափել և ազատվել փախուստի միջոցով»[28]։ Այս մեկնաբանությունն իրոք որ սրամիտ է, բայց դժվար թե համապատասխան լինի իրականությանը։ «Այս երևույթը,—գրում է Մանանդյանը,—ինչպես գիտենք, ճորտական գյուղացիության համար սովորական է եղել նաև ուրիշ երկրներում»։ Հասկանալի է, որ եթե շինականները աշխատում են փախչելու միջոցով հողից և ֆեոդալների հանդեպ իրենց պարտականու-

28 Նույն տեղում, էջ 168, հմմտ. Քննական տեսություն..., էջ 369։

թյուններից ազատվել, ապա այդ կարող էր լինել միայն այն դեպքում, եթե շինականների վիճակն անտանելի էր։ Մինչդեռ գիտնականը համոզիչ կերպով ապացուցում է, որ Հայաստանում «գոյություն չեն ունեցել հնագույն այս շրջանում ոչ ճորտական դաժան այն իրավունքը, որ ԺԵ—ԺԶ դարերից սկսած հետզհետե գոյացել ու զարգացել են, գլխավորապես Արևելյան Եվրոպայում, ոչ էլ այդ երկրների крепостной կամ leibeigen կոչվող ստրկական գյուղացիությունը, որը ամենամեծ չափերով ենթարկված է եղել կալվածատեր ազնվականության քմահաճ ու անողոք շահագործմանը»[29]։ Եթե ճիշտ է ակադ. Մանանդյանի այդ եզրակացությունը (մեր կարծիքով, միանգամայն ճիշտ է), ապա անհամոզիչ է թվում վերոհիշյալ այն ենթադրությունը, որ շինականները, փախուստի դիմելով, աշխատել են խուսափել ծանր լծից։ Տրամաբանական չէ երևույթի պատճառը բացասել, իսկ հետևանքն ընդունել։

Մյուս կողմից, «Ողբ»-ում հիշատակված այդ արատները չեն կարող համարվել ժամանակից կտրված երևույթ։ Կոնկրետ դեպքում մեր պատմիչի ինչպես ամբողջ «Ողբ»-ը, այնպես էլ հիշատակված հատվածը ոչ մի կերպ չի կարելի վերագրել ոչ իր ժամանակին։ Այլ բան է, երբ «Պատմության» մեջ նա խոսում է ընդհանուր պատմական երևույթների մասին, որոնք կարող էր փոխառած լինել այլ աղբյուրներից, ժողովրդական ավանդություններից և վերջապես, կարելի կլինի ենթադրել, որ դրանք գոյություն են ունեցել երկար ժամանակ։ Օրինակ, երբ Մանանդյանը համայնական հողատիրության հարցում վկայակոչում է Մովսես Խորենացուն, այդտեղ որևէ տարօրինակ բան չկա, քանի որ այդ կարգի հողատիրությունը գոյություն է ունեցել դարերով։

Ինչպես հայտնի է, Հ. Մանանդյանը Խորենացուն համարում է IX դարի հեղինակ։ Նույնպես հայտնի է, որ «Ողբ»-ը պատմիչի հոգեկան տրամադրությունների զեղումն է, ուստի և իր ժամանակի իրական դրության մռայլոր արտացոլումը։ Մեզ համար անհասկանալի առեղծված է մնում, թե ինչպես կարող է Մովսես Խորենացու «փախչողք ի ժառանգութենէ» արտահայտությունը, որ ըստ Մանանդյանի գրվել է IX դարում, արտահայտելիս լինի V դարի շինականների սոցիալական ընդվզումները։ Մյուս կողմից, եթե հետևելով ակադ. Մանանդյանին, ընդունենք, որ «փախչողք ի ժառանգութենէ» արտահայտությունը բնորոշում է շինականներին սկսած V դարից մինչև IX դարը, ապա նույն տրամաբանությամբ չենք կարող չընդունել, որ «վէնք, ստահակք, այրեցողք (կամ արբեցողք), վնասակարք» արտահայտությունները նույնպես վերաբերում են շինականներին այդ նույն ժամանակներում։ Ավելին, ընդունելով Մանանդյանի այդ ենթադրությունը, պարտադրաբար, պետք է ընդունել նաև, որ ազնվականության և հոգևորականության վերաբերյալ Խորենացու նշած արատները նույնպես վերաբերում են նշված ամբողջ ժամանակաշրջանին։ Հետևաբար, պետք է հանգել այն արտառոց եզրակացության, որ Խորենացու կարծիքով ամբողջ հայ ժողովուրդը, իր բոլոր դասերով, սկսած V դարից մինչև IX դարը, արատների մի հավաքածու էր։ Մի բան, որ ոչ միայն հակասում է Պատմահոր ամբողջ էությանը, այլև առաջին հերթին Մանանդյանի և ամեն մի բանիմաց մարդու ըմբռնմանը։ Ուստի, մեր կարծիքով, միանգամայն իրավացի է Ստ. Մալխասյանցը, երբ գրում է՝ «նկարագրված բաց-

29 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա. էջ 370. հմմտ. Ֆեոդալիզմը..., էջ 179—180։

սական երևույթները ոչ այնքան իրականության պատկերն են, որքան անկեղծ հայրենասեր հեղինակի վշտահար հոգու»[30]։

Ուրեմն, մենք կարծում ենք, որ «փախչողք ի ժառանգութենէ» հազիվ թե ունենա այն նշանակությունը, որը դրան վերագրում է Մանանդյանը։

Մյուս կողմից «ժառանգութիւն» բառը շատ առաձգական և բազմաթիվ առումներ ունեցող բառերից է. նա կարող է նշանակել ոչ միայն ժառանգած գույք (կամ ինչպես Մանանդյանն է ենթադրում՝ «հողը և շինական ծառայության ծանր վիճակը»), ոչ միայն եկեղեցական կոչում, ինչպես Մ. Էմինը և Խ. Ստեփանն են կարծում, այլև ընդհանրապես հոգևորականություն, հոգևոր իշխանություն (տե՛ս Առձեռն և Բացատրական բառարանները), ուստի ամենևին անհավանական չէ, որ «փախչողք ի ժառանգութենէ» արտահայտությամբ Խորենացին ուզում էր ասել, որ ժողովուրդը հոգևորական իշխանությունից կամ, ավելի ճիշտ, քրիստոնեական դոգմաներից փախչում էր, որ այլ բան չի նշանակում, քան այն, որ քրիստոնեական հավատը ժողովրդի մեջ խիստ թուլացել էր։

6

Մենք կարևոր ենք համարում քննության առնել Մ. Խորենացու գործածած «առանձնականութիւն» արտահայտությունը, որին մեր ամենաականավոր հայկաբանները տարբեր բովանդակություն են հաղորդում և տարբեր եզրակացությունների հանգում։ Իսկ ակադ. Մանանդյանի համար այդ արտահայտությունը կովան է ծառայում, որ «Հայաստանի նման նախարարական մի երկրում, որը բաժանված էր անջատ ու գրեթե անկախ իշխանությունների... կարող էին նույնիսկ լինել ճորտական գյուղացիությունից դուրս նաև ազատ գյուղացիության մնացորդներ»[31]։ Բայց այդ հանգամանքը «չէր կարող բացասել... շինական դասի հոծ բազմության իրավական դրության գլխավոր հատկանիշները՝ «ի հարկի ծառայութիւն»-ը և ճորտական վիճակը, որոնք իրենց հիմնական գծերով, ըստ երևույթին, միևնույն բնույթը պետք է ունենային նախարարական Հայաստանի բոլոր շրջաններում»[32]։

Ահավասիկ, իր այս դրույթն ապացուցելու համար Մանանդյանը կովան է ծառայեցնում «առանձնականութիւն» արտահայտությունը։

Խորենացին, գտնելով, որ մեր երկրում ևս հիշատակության արժանի պատմական իրադարձություններ են տեղի ունեցել, բայց մեր նախնիքները հոգ չեն տարել դրանք գրի առնել, նշում է՝ «ուցեն ոմանք պատճառաբանեն, թե դրան խանգարել են պատերազմները և սեփական գիր չունենալը։ Պատմահայրը գտնում է, որ նման արդարացումներն անտեղի են, որովհետև պատերազմներն անընդհատ չեն եղել և կարող էին գրել հունարեն կամ պարսկերեն, քանի որ «գիր Պարսից և Յունաց, որովք այժմ զիւղից և զաւառաց, ևս և յուրաքանչիւր տանց առանձնականութեանց. և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք»։ Ակադ. Մանանդյանը, բերելով այդ հատվածի Խորեն Ստեփանեի թարգմանությունը, գտնում է, որ

30 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանի, էջ 414։
31 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 171։
32 Նույն տեղում, էջ 173։

«այս թարգմանության մեջ անտես է առված «առանձնականութեանց» բառը, որի իմաստը ըստ երևույթին չի հասկացվել»[33]։ Խ. Ստեփանեն այդ հատվածը թարգմանել է այսպես՝ «գանազան գյուղերի, գավառների և առանձին տների վեճեր ու դաշինքներ»։ «Իւրաքանչիւր տանց առանձնականութեանց» դարձվածքն այդտեղ, ինչպես տեսնում ենք, թարգմանված է մեր ընդգծած առանձին տներ արտահայտությամբ։ Ուստի կարծում ենք, որ ըստ Ստեփանեի «առանձնականութիւն» նշանակում է առանձին, հետևաբար ակադ. Մանանդյանին հետաքրքրող բառն այդտեղ թարգմանված է (սխալ, թե ճիշտ, դա այլ հարց է)։ Ստեփանեի թարգմանության մեջ բացակայում է Խորենացու «իւրաքանչիւր» բառը, որը նշանակություն չունի, քանի որ «յուրաքանչյուր առանձին տուն» և «առանձին տներ» արտահայտությունների միջև ըստ էության որևէ տարբերություն չկա։ Մենք կարծում ենք, որ Խ. Ստեփանեի թարգմանության թերությունը ոչ թե այդ բառի բառ թողնելը կամ թարգմանելն է, այլ այն, որ հարցի էությունը ճիշտ չի հաղորդված։ Եվ այդ տեսակետից Հ. Մանանդյանի և Խ. Ստեփանեի թարգմանությունների միջև մենք որևէ տարբերություն չենք տեսնում։ Ակադ. Մանանդյանն այդ հատվածը թարգմանում է այսպես. «Դեղություն են ունեցել Պարսից և Հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ մեծ թվով պատմողական հուշագրեր, որ վերաբերում են գյուղերի ու գավառների և ամեն մի տան առանձնականություններին, նաև բոլոր հակառակություններին ու դաշինքներին»[34]։ Այսպիսով, ինչպես Խ. Ստեփանեի, այնպես էլ Մանանդյանի թարգմանությամբ ստացվում է, որ առանձնականությունները (կամ ըստ Մանանդյանի՝ առանձնահատկությունները=особенность, своеобразность)[35], վերաբերում են ոչ միայն նախարարական տներին, այլև գյուղերին ու գավառներին։ Դրանով Մովսես Խորենացու այդ վկայությունը խիստ մոտենում է Հ. Մանանդյանի կոնցեպցիային։ Ուրեմն, եթե նկատի ունենանք շինականների իրավական դրության մեջ հետաքրքրող հարցը, պետք է եզրակացնենք, որ Խորենացու խոսքը տարբեր գյուղերի ու գավառների շինականների դրության առանձնահատկությունների մասին է, այսինքն՝ մի տեղ բարգավաճություն, մի այլ տեղ կողոպտություն, հնարավոր է նաև ազատ գյուղացիության որոշ մնացորդ, բայց դրանք «չեն կարող, իհարկե, բացասել շինական դասի հոծ բազմության իրավական դրության «ի հարկի ծառայութիւն»-ը և ճորտական վիճակը»[36]։

Ակադ. Մանանդյանի կողմից ինչպես ամբողջ հատվածի իմաստի թարգմանությունը, այնպես էլ «առանձնականութիւն» բառի մեկնաբանությունը մեզ անհամոզեցուցիչ են թվում։ Խորենացին «գիւղից և գաւառաց» բառերից հետո գրում է՝ «ևս և տանց առանձնականութեանց...»։ Մենք տրամադիր ենք կարծելու, որ Պատմահայրն այդ «ևս և»-ով «առանձնականութեանց» և հաջորդ բառերը ոչ թե միացնում, այլ անջատում է նախորդ բառերից։ Ուստի, մեր կարծիքով, Մանանդյանի թարգմանությունը պետք է խմբագրվի այսպես՝ «գո-

33 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հատ. Բ, մաս Ա, էջ 364—365։

34 Նույն տեղում, էջ 364։

35 «Տեղեկագիր Գիտության և արվեստի ինստիտուտի», 1926, N 1, էջ 36։

36 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հատ. Բ, մաս Ա, էջ 365։

յություն են ունեցել Պարսից և Հունաց գրեր, որոնցով գրված այժմ գտնվում են մեզ մոտ մեծ քվով պատմողական հուշագրեր, որ վերաբերում են գյուղերին ու գավառներին, ինչպես և տոհմերից յուրաքանչյուրի առանձին լինելուն, ընդհանուր հակառակություններին և դաշինքներին»։ Այս խմբագրությամբ, ի հակադրություն Մանանդյանի, առանձնականությունները, հակառակությունները և դաշինքները վերաբերում են ֆեոդալական տներին (տոհմերին), բայց ոչ գյուղերին ու գավառներին։ Եվ հասկանալի է, որ մենք այստեղ գործ ունենք միջֆեոդալական գժտությունների ու համաձայնությունների հետ։ Հարցին այդպես մոտենալով, մեզ թվում է, միանգամայն հասկանալի է դառնում «առանձնականությանց» բառի իմաստը, որ պարզապես նշանակում է «առանձին լինելը», մյուսներից կախում չունենալը, կամ ավելի պարզ ասած՝ տոհմերի ֆեոդալական ուրոհվածությունը։

Ուշագրավ է, որ շինականների միջև «իրավական ու տնտեսական դրության մասնակի տարբերություններն ու առանձնահատկությունները... մնում են մութ փաստական տեղեկությունների բացակայության պատճառով»[37]։ Եթե Խորենացին բազմաթիվ գրավոր աղբյուրներ է ունեցել այդ առանձնահատկությունների մասին, ապա հագիվ թե Պատմահայրը դրանցից գոնե մի քանիսը չգտեգեր իր Պատմության մեջ։ Մինչդեռ բազմաթիվ տեղեկություններ ենք գտնում տոհմերի (տների) «առանձնահատկություն»-ների՝ ֆեոդալական ուրոհվածության վերաբերյալ, օրինակ, Բուզրատունիների, Արծրունիների, Գնունիների, Ամատունիների և ուրիշների (տե՛ս Պատմություն, դիրք 2, է, բ-ժէ և այլն)։

7

Ակադ. Մանանդյանն իրավացիորեն դտնում է, որ «շինական»-ների տնտեսական կացության ամենակարևոր խնդիրներից մեկն է «կոռ»-ի խնդիրը պատմական հնագույն այս շրջանում»[38]։ Այնուհետև հարդելի պատմաբանը բերում է երկու վկայություն իբրև կոռի առկայության ապացույց և եզրակացնում. «Վերոհիշյալ վկայություններում «կոռ»-ն, անտարակույս, այն պարտադիր աշխատանքներն էին, որոնք ինչպես միջնադարյան cervea-ն, գերմ. Frohndienst-ը և ռուս. барщина-ն, կատարվելու էին ձրի կալվածատիրոջ մոտ»[39]։

Եթե գիտնականին իսկապես հաջողվեր անառարկելիորեն ապացուցել իր այդ թեզը, դա ինքնին շատ լուրջ հիմք կլիներ շինականներին ազնվականների գույք և հողին ամրացած ճորտեր համարելու։ Բայց, դժբախտաբար, ակադ. Մանանդյանին ոչ միայն չի հաջողվել այդ հույժ կարևոր թեզն ապացուցել, այլև շինականների և ազնվականների նրա կողմից պատկերացրած հարաբերությունների պայմաններում այդ անել անհնարին է, առանց հակասելու տեսական տնտեսագիտության սկզբունքներին։

«Կոռ» տերմինով, ինչպես հայտնի է, արդի հայերեն տնտեսագիտական և պատմական գրականության մեջ արտահայտվում է նույն իմաստը, ինչ որ ռուսերեն գրականության մեջ барщина տերմինով, այսինքն այդ այն հավելյալ աշխատանքն էր, որ ֆեոդալական արտադրահարաբերությունների պայ-

37 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 173։
38 Նույն տեղում, էջ 208։
39 Նույն տեղում, էջ 209—210։

մանեներում ստեղծում էր այնքան ահեղ ոգեշնչում։ Ինչպես վերը տեսանք, ակադ. Մանանդյանը հենց այդ գիտական առումով էլ գործ է ածում «կոռ» տերմինը։ Այդպիսի կոռային աշխատանք կարող է առկա լինել միայն այն դեպքում, երբ «անմիջական արտադրողը (ներկա դեպքում շինականը — Ս. Մ.) շարաթվա մի մասում... մշակում է փաստորեն իրեն պատկանող հողը..., իսկ շարաթվա մնացած օրերին անվարձ աշխատում է հողի տիրոջ կալվածում, հողատիրոջ համար...»[40]։ Այսպիսով, կոռային աշխատանքը ենթադրում է առնգհատ տեսական աշխատանք (ոչ գիպվածային), բուն արտադրողի անհրաժեշտ աշխատանքի համար հողի առանձնացում, կալվածատեր ֆեոդալի ինքնուրույն, բուն արտադրողի անտեսությունից անջատ տնտեսություն, որտեղ գործադրվում է հավելյալ աշխատանքը, կամ այլ կերպ ասած՝ անհրաժեշտ և հավելյալ աշխատանքներն իրարից անջատված են։ Առանց այս անհրաժեշտ պայմանների վերոհիշյալ առումով կոռային աշխատանք լինել չի կարող։ Կոռվորական տնտեսության էությունը փայլուն կերպով բնութագրել է Վ. Ի. Լենինը։ Նա գրում է. «Այն ժամանակվա տնտեսական սիստեմի էությունն այն էր, որ... տվյալ կալվածի ամբողջ հողը բաժանվում էր կալվածատիրական և գյուղացիական հողի, վերջինս իրեն հողաբաժին տրվում էր գյուղացիներին, որոնք... իրենց աշխատանքով և իրենց ինվենտարով մշակում էին այն, նրանից իրենց ապրուստն ստանալով։ Գյուղացիների այս աշխատանքի արդյունքը... անհրաժեշտ պրոդուկտ էր. անհրաժեշտ գյուղացիների համար, որպես նրանց ապրուստի միջոցներ տվող, կալվածատիրոջ համար, որպես նրան աշխատող ձեռքեր տվող. իսկ և իսկ այնպես, ինչպես կապիտալի արժեքի փոփոխական մասին փոխարինող պրոդուկտն անհրաժեշտ պրոդուկտ է կապիտալիստական հասարակության մեջ։ Իսկ գյուղացիների հավելյալ աշխատանքը՝ նրանց կողմից միևնույն ինվենտարով կալվածատիրոջ հողը մշակելն էր. այս աշխատանքի պրոդուկտը գնում էր կալվածատիրոջ օգտին։ Հավելյալ աշխատանքն այստեղ, հետևաբար, տարածականորեն անջատված էր անհրաժեշտից. կալվածատիրոջ համար մշակում էին կոռատիրական հողը, իրենց համար՝ իրենց հողաբաժինները. կալվածատիրոջ համար աշխատում էին շարաթվա որոշ օրերին, իրենց համար՝ մյուս օրերին։ Այսպիսով գյուղացու հողաբաժինը այս տնտեսության մեջ հանդիսանում էր որպես բնավճար աշխատավարձ..., կամ կալվածատիրոջը աշխատող ձեռքերով ապահովելու միջոց։ Գյուղացիների սեփական տնտեսությունն իրենց հողաբաժնի վրա կալվածատիրոջ տնտեսության պայմանն էր, որի նպատակը ոչ թե գյուղացուն ապահովելն էր ապրուստի միջոցներով, այլ կալվածատիրոջը՝ աշխատող ձեռքերով»[41]։

Հենց ինքը, հարգելի գիտնականը, հենվելով սեռորագույն ուսումնասիրությունների վրա, մեզ տալիս է հետևյալ բնորոշումը. «Ճորտական գյուղացիության վիճակը մեծապես կախված է եղել երկու իրարից տարբեր սիստեմներից, որ անվանում են հողային տիրություն (Grundherrschaft) և տնտեսային տիրություն Gutsherrschaft)։ Հողային տիրություն է կոչվում սենյորական կազմակերպությունը, երբ սենյորն ստանում է իր գյուղացիներից զանազան տուրքեր ու հարկեր, բայց ինքը չունի իր սեփական մեծ տնտեսությունը, իսկ տնտեսային տիրություն՝ երբ սենյորը թեև նույնպես

[40] Կ. Մարքս. Կապիտալ, հատ. 3, մաս 2, էջ 227.
[41] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 220—221.

ստանում է իր գյուղացիներից տուրքեր ու հարկեր, բայց նրա եկամուտի գլխավոր աղբյուրը ոչ թե այդ վճարումներն են, այլ նրա ընդարձակ խոշոր տնտեսությունը, որը նա օգտագործում ու մշակում է առավելապես իր գյուղացիների պարտադիր աշխատանքով»[42] (ընդգծումը մերն է—Ս. Մ.)։

Այս բացատրությունից ինքնին բխում է, որ եթե «գոյություն է ունեցել Արշակունյաց ժամանակ թե աշխատապարտ և թե արդյունավճար ռենտա»[43], ապա հին Հայաստանի ֆեոդալական դասը պետք է ունեցած լիներ «ինքնուրույն խոշոր տնտեսություն», կամ առնվազն «հողային տիրության» զուգահեռ պետք է գոյություն ունեցած լիներ նաև «տնտեսային տիրություն»։ Բայց բանից դուրս է գալիս, որ «պատմական աղբյուրներից բնավ չի բխում, որ նախարարներն իրենք ևս եղած լինեին խոշոր հողագործներ և ունեցած լինեին սեփական և ինքնուրույն մեծ տնտեսություններ։ Նրանց եկամուտի գլխավոր աղբյուրը կազմել են, հավանաբար, շինականներից ստացվող տուրքերը և հարկերը։ Հին Հայաստանի կալվածատիրական սիստեմը համապատասխան պետք է ընդունել ճոպային տիրույթ կոչվող սենյորական կազմակերպությանը»[44] (ընդգծումը մերն է—Ս. Մ.)։ Ուրեմն, մի կողմից արձանագրվում է, որ ռուսական барщина-ի իմաստով կոռի առկայությունը հին Հայաստանում անառարկելի փաստ է, մյուս կողմից, որ հայ ֆեոդալները ինքնուրույն տնտեսություն չեն վարել։ Մեզ համար առեղծված է մնում, թե այդ դեպքում որտե՞ղ էր գործադրվում շինականի՝ ժամանակով ու տարածությամբ իր «սեփական» հողակտորից դուրս այն հավելյալ աշխատանքը, որն աշխատավճար ռենտա էր ստեղծում։ Անհասկանալի առեղծված է մնում, թե ինչպե՞ս կարող է գոյություն ունենալ барщина առանց барское хозяйство-ի և барская запашка-ի։

Արդ՝ ի՞նչ է ակադ. Մանանդյանի համար կռվան ծառայում կոռվորության, իբրև барщина, առկայության համար։ Նա բերում է երկու վկայություն։

1. Ակադ. Մանանդյանը, բերելով Դվինի ժողովի ԺԱ կանոնը, այնտեղ արձանագրված... կռուով և պատուհասիւ նեղեն, զողորմելի եղբարսն չարչարեն անխղճաբար», հիմնվելով Կոչի վրա ուղղում է՝ «...կոռով եւ պահակութեամբ նեղեն և զողորմելի եղբարսն չարչարեն անխղճաբար»։ Այս ուղղումը մեր կարծիքով հնարավոր է։ Ընդունելի պետք է համարել դիտականի այն ենթադրությունը, որ «կոռ»-ը գոյություն ունեցած պիտի լիներ Հայաստանում մարզպանության և, հավանաբար, նաև Արշակունյաց թագավորության շրջանում»[45]։ Բայց նրա բերած տեքստից, իր իսկ ուղղումով հանդերձ, բոլորովին չի բխում, որ այդ տերմինով արտահայտվում էր իր հասկացած բովանդակությունը։ Մեզ ավելի հավանական է թվում, որ այդ կոնտեքստում «կոռ» նշանակում է ոչ թե կալվածատիրոջ տնտեսության մեջ շինականի անընդհատ տևական աշխատանքը, այլ դիպվածային, բուն հողագործության հետ առնչություն չունեցող աշխատանքը, ավելի պարզ ասած ոչ թե ռուսերեն барщина-ի իմաստն ունի, այլ повинность-ի, որ նշանակում է պարհակ։ Այդ բխում է ոչ միայն

42 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, էջ 368—369։

43 Նույն տեղում, էջ 382։

44 Նույն տեղում, էջ 369։ Տե՛ս նաև էջ 321 և 410։

45 Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 208, 209։

տեքստի ամբողջությունից, այլև «պահակութիւն» բառի Մանանդյանի ճիշտ բացատրությունից, որ կոռի հատուկ մի տեսակ էր։ Ոչ պահակությունը չէր կարող լինել աշխատավճար ռենտա ստեղծող աշխատանք, այլ կարող էր լինել սոսկ ֆեոդալական պարհակ։

2. Ակադ. Մանանդյանի բերած մյուս վկայությունը, չնայած ուղղակի Հայաստանին չի վերաբերում, բայց, ճիշտ է, կարող է կովան ծառայել նրա եզրակացության համար, հարկավ, եթե համապատասխանում է նրա մեկնաբանությանը։ «Կարևոր է հիշել,— գրում է Մանանդյանը,— որ «Կոռ»-ը մարզպանության ժամանակ գոյություն է ունեցել նաև Սասանյան Պարսկաստանում... Խոսելով երկարատև սովի և ժողովրդի ծանր դրության մասին... Տարարին հաղորդում է, որ Պերոզ թագավորը նամակների միջոցով հայտարարում է ամբողջ ժողովրդին, որ ազատում է նրան հողային հարկից և գլխահարկից, հանրօգուտ նպատակների համար ծանրություններից և կոռից, որ նրանց շնորհում է լիակատար ազատություն և հրամայում է, որ նրանք հոգան ու մտածեն իրենց սնունդի և պահպանության մասիս»[46]։

Այստեղ մենք նշույլ անգամ չենք տեսնում, որ խոսքը վերաբերում է ռուսական барщина-ն հիշեցնող կոռին։ Ընդհակառակն, տեքստի ամբողջությունը որոշակիորեն մեզ թելադրում է, որ այդ հատվածում կոռային աշխատանքը «հանրօգուտ» նպատակի էր ծառայում և ոչ թե կալվածատիրոջ տնտեսություններում գործադրվող ձրի աշխատանք էր։ Եթե այնպես հասկանանք, ինչպես ակադ. Մանանդյանն է մեկնաբանում, ապա դուրս կգա, որ Պերոզը ֆեոդալներին զրկում էր եկամուտների հիմնական աղբյուրից։ Մինչդեռ թագավորը ժողովրդին ազատում է պետական հողային հարկից, գլխահարկից և հանրօգուտ կոռից։ Այս կոնտեքստում «կոռ» տերմինն այլ բան նշանակել չի կարող, բան պետական ու հասարակական արտակարգ աշխատանքները՝ պարհակները։ Չէ որ հենց ինքը Մանանդյանն այլ առնչությամբ միանգամայն իրավացիորեն գրում է, որ «շինականները հարկատու են եղել ոչ միայն կալվածատիրոջը, այլև արքունիքին»[47]։ Ուստի եթե թագավորը սովի ժամանակ գյուղացիներին ազատում էր հարկերից և հանրօգուտ կոռից, այդ նշանակում է, որ նկատի ուներ բացառապես պետական հարկերն ու պարհակները և ոչ թե ֆեոդալական ռենտան։

Ինչպես տեսանք, ակադ. Մանանդյանի եզրակացության համար հիմք է ծառայում ոչ թե իր բերած տեքստի բովանդակությունը, այլև «կոռ» բառի առկայությունը միայն։ Սակայն մեր անցյալ գրականության մեջ եզակի չեն այն դեպքերը, երբ կոռը նշանակում է դիպվածորեն, պատահած դեպքում, բուն գյուղացիական-արտադրական աշխատանքներից դուրս և կալվածատիրոջ անջատ տնտեսության հետ առնչություն չունեցող աշխատանքը, օրինակ՝ հարևանների կողմից ճանապարհների, կամուրջների, առուների վերանորոգումը, կարիքավոր համայնքներին աշխատանքային օգնություն ցույց տալը, ֆեոդալների կամ պետական ամրոցների վերանորոգումը, բեռների փոխադրումը և այլն։ Հ. Մանանդյանը շատ մեծ էրուդիցիայի տեր գիտնական էր, և այդ հանրահայտ փաստը նրան քաջ հայտնի էր (տե՛ս Հայաստանի արքունի հարկերը մարզպանական շրջանում, «Տեղեկ. գիտ. և արվեստ. ինստ.», 1926, էջ 43)։

---

46 Նույն տեղում, էջ 209։
47 Նույն տեղում, էջ 205։

Նա իր երեք աշխատությունների մեջ էլ կրկնում է. «Ֆրանսիական cervee-ն և գերմանական Frohndienst-ը, ինչպես հայտնի է, ունեցել են ընդարձակ իմաստ և գործ են ածվել նաև պետական և հասարակական բնույթ ունեցող պարտականությունների համար։ Այդպիսի աշխատանքներ էին, օրինակ, ճանապարհների շինությունն ու նորոգումը, փոխադրական միջոցների հայթայթումը... Հայկական «Կոռ»-ը ունեցել է նույնպիսի ընդարձակ իմաստ, ինչպես cervée-ն և Frohndienst-ը»[48]։

Այսպիսով, «կոռ» տերմինի տակ ակադ. Մանանդյանը հասկանում է երկու իմաստ՝ 1) կալվածատիրոջ համար կատարվող ձրի աշխատանք, որի դեպքում աշխատավճար ոչնչան «իր ակնրախ, շոշափելի ձևով գոյություն ունի, քանի որ անմիջական արտադրողի՝ հենց իրեն համար կատարած աշխատանքը տարածապես և ժամանակապես դեռ անջատված է հողատիրոջ համար կատարած նրա աշխատանքից»[49], 2) «պետական ու հասարակական բնույթի աշխատանքային պարտականություններ», այսինքն՝ պարհակներ։ Առաջին տեսակի «կոռը» անպայման կապված է գյուղացու հողին ամրացած լինելու և կալվածատիրոջ գույքը համարվելու հետ։ Եվ այդ դրույթը ակադ. Մանանդյանին, մեր կարծիքով, չի հաջողվել ապացուցել, իսկ երկրորդ տեսակի կոռը կապված չէ ոչ հողին ամրացած լինելու, ոչ էլ գույք հանդիսանալու հանգամանքի հետ. դա ֆեոդալական պարհակ էր, որին ենթակա էին պետության հպատակները և համայնքի անդամները։

Այսպիսով, հին Հայաստանի շինականների ճորտ համարելու այս փաստարկումը ևս, մեր կարծիքով, իրական հիմք չունի։

8

Մեր խորին համոզմամբ պատմական տերմինների բովանդակության ըմբռնումը ոչ միայն բանասիրական ու լեզվաբանական հարց է, այլ նաև մեծապես ընդհանուր կոնցեպցիայի հարց։ Հին Հայաստանի շինական դասի ճորտ և գույք լինելու վերաբերյալ ակադ. Մանանդյանի եզրակացությունների անհամոզիչ լինելը բխում է քննարկվող հարցի վերաբերյալ նրա ընդհանուր ոչ ճիշտ կոնցեպցիայից։ Նրա կարծիքով գերմանական horig և leibeigen, ռուսական крепостной և зависимый, բյուզանդական colonus կատեգորիայի գյուղացիները բոլորն էլ ճորտեր են։ Տարբերությունն այն է, որ ճորտությունը մի դեպքում մեղմ, մյուս դեպքում խիստ է արտահայտված եղել։ Դրանից էլ եզրակացնում է, որ «ճորտություն և ճորտ բառերը խիստ ճապաղ և առաձգական գաղափարներ են»[50]։ Օրինակ, Մանանդյանը բյուզանդական կոլոնների մասին գրում է, որ նրանք «կապված էին հողին և չունեին տեղափոխման իրավունք», որ «նրանք իրավունք չեն ունեցել վարել որևէ պաշտոն, նույնիսկ ստորին կարգի»[51], որ «կոլոնները կարող էին ընդունվել տեղական եկեղեցիների մեջ իրենց տերերի հաճությամբ»[52]։ Մեզ թվում է այս սահմանափա-

48 Նույն տեղում, էջ 211։

49 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, մաս 2, էջ 330։

50 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, էջ 368։

51 Նույն տեղում, էջ 379։

52 Նույն տեղում, էջ 372։

կումներր, մանավանդ հողին կապված և տեղափոխման իրավունքից զուրկ լինելը, խոսում են այն մասին, որ կոլոններն անձնապես անազատ էին։ Ինչպես հայտնի է, մինչև Կոստանդիանոսի 332 թ. էդիկտը կոլոնները չնայած կախման մեջ էին հողատերերից, բայց եթե ոչ փաստորեն, գոնե իրավականորեն համարվում էին ազատ, տեղափոխության իրավունք ունեին և կապված չէին հողին, նրանց ազատ լինելու միակ ցուցանիշը հենց այդ վերջին հանգամանքն էր։ Նույնպես հայտնի է, որ 332 թ. էդիկտով կոլոններին արգելվում էր մի կալվածից մի ուրիշ կալված փոխադրվել. այդ էդիկտի հիման վրա փախած կոլոններին շղթայակապ վերադարձնում էին նրան ամրացված կալվածը՝ նախկին տերերի մոտ։ Այդ ժամանակից կոլոնները համարվում էին «հողի ստրուկներ», կալվածատերերն իրավունք չունեին իրենց հողերն օտարել առանց կոլոնների։ Էնգելսը կոլոնների մասին գրում է՝ «Նրանք ստրուկ չէին, բայց ազատ էլ չէին համարվում. նրանք չէին կարող ազատների հետ ամուսնանալ, իսկ իրար մեջ կնքված ամուսնություններն օրինական չէին համարվում, այլ դիտվում էին, ինչպես ստրուկների ամուսնությունները, որպես լոկ կենակցություն։ Նրանք միջնադարյան ճորտերի նախակարապետներն էին»[53]։ Մինչև ակադ. Մանանդյանը գտնում է, որ «ճորտերի առաջին (մեղմ) տեսակին պատկանում էին, օրինակ, Բյուզանդական կայսրության կոլոնները, որոնք անձնապես ազատ էին, բայց կապված էին հողին և չունեին տեղափոխման իրավունք»։ Իհարկե, կարելի է մտածել, որ կոլոններն ազատ էին ստրկությունից, բայց լինելով հողին ամրացած, նրանք ճորտեր էին։ Բայց Մանանդյանի խոսքը ստրկության և ճորտության համեմատության մասին չէ, այլ ֆեոդալական արտադրաշարաբերությունների պայմաններում գոյություն ունեցող ճորտերի իրավական դրության։ Որ Մանանդյանը նկատի ունի ոչ թե ստրկությունից ազատ լինելու հանգամանքը, այդ պարզ ընդգծված է նրա բոլոր աշխատություններում, որտեղ այդ մասին խոսվում է. օրինակ, կոլոնների հետ միասին նա հիշատակում է նաև գերմանական hörig և ռուսական зависимые գյուղացիներին։ Իսկ այդ պայմաններում մենք դժվարանում ենք ֆեոդալիզմի ժամանակ պատկերացնել այնպիսի գյուղացիներ, որոնք հողին ամրացած ճորտեր էին և միաժամանակ անձնապես ազատ էին։

Այսպիսով, հին Հայաստանի շինականների՝ հողին ամրացած և գույք լինելու վերաբերյալ ակադ. Մանանդյանի կարծիքը բոլորովին ապացուցված չէ։

Եթե նկատի ունենանք սկզբնաղբյուրների վրա կատարած հետազոտություններից Մանանդյանի արած մյուս եզրակացությունները և անընդունելի համարենք շինականների հողին ամրացած և ազնվական տերերի գույք լինելու վերաբերյալ նրա մեկնաբանությունները, ապա պետք է ենթադրել, որ հին Հայաստանի շինականները համապատասխանելիս պետք է լինեին ֆեոդալիզմի պայմաններում գոյություն ունեցող տուրքապարտ «ազատ» գյուղացիներին։ Այդպիսի հարաբերությունները որոշ երկրներում հատուկ էին ֆեոդալիզմին ճիշտ այնպես, ինչպես ուրիշ երկրներում՝ ճորտային հարաբերությունները։

---

53 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, 1953, էջ 210—211։

О СОЦИАЛЬНОМ ПОЛОЖЕНИИ СОСЛОВИЯ «ШИНАКАНОВ» ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Проф. С. С. МАРКОСЯН

(Резюме)

Вопрос социального положения основного трудового населения древней Армении, так называемых «шинаканов», является одним из спорных в истории армянского народа. В источниках почти нет прямых указаний, дающих возможность хоть сколько-нибудь удовлетворительно разрешить этот вопрос. Историкам приходится делать заключения из отдельных общих выражений и отдельных слов, подчас имеющих разные значения, и потому научная интерпретация социально-экономических терминов армянских источников имеет важнейшее значение.

В этом отношении очень много сделано академиком Я. А. Манандяном. Из его исследований можно прийти к заключению, что земельный фонд древней Армении находился в распоряжении сельских общин по системе общинного пользования и передела общинных земель. Правящие сословия нахараров, «азатов» и духовенство получали продуктовую (натуральную) ренту. Отсутствовали барское хозяйство и барская запашка. «Шинаканы» не были лишены личных прав, имели собственные, приобретенные земли («ксакагин»), не были подвержены суду и полицейскому надзору землевладельцев, а судились общими судами. В отношении штрафов они находились в гораздо лучшем положении, чем средневековые английские и русские незакрепощенные крестьяне (ceorl-ы и смерды). В феодальной Армении «шинаканы» принимались во внимание даже в политической жизни.

Наряду с этим акад. Я. Манандян, интерпретируя древнеармянских историков, приходит к заключению, что «шинаканы» были прикреплены к земле, составляли личное имущество правящих сословий и что в древней Армении наряду с рентой продуктами существовала и отработочная рента в виде русской барщины.

Автор данной статьи находит, что эти два ряда положений, выдвинутых акад. Манандяном, взаимно исключают друг друга, и, разбирая все основные доводы акад. Манандяна, развитые им в своих капитальных трудах («Заметки о положении шинаканов древней Армении в эпоху марзбанства», «Государственные налоги Армении в эпоху марзбанства», «Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении», «Феодализм в древней Армении» и «Критический обзор истории армянского народа», т. II, ч. I), приходит к заключению, что интерпретация текстов, приводимых акад. Манандяном в отношении прикрепления шинаканов к земле, как и наличия барщины в древней Армении, не вытекает из этих текстов и противоречит им.